Կորն բաժանէ ըղչնս րհս․ և միշտ։
12 11 Կեանք և կենդանարար լոյս և գոյա
ցուցիչ լուսոյ ծյ․ ինքն բարի աղբիւր
բարութեան Հոգի ուղիղ առաջնորդա
կա ն․ և։ Հոգի զօրութեան և եր
կիւղի․ որով Հայր ճանաչի և որդի փա
ռաւորի ծ․ որոց մի կարգ մի պատիւ մի
երկրպագութիւն կատարելութիւն
սրբութեան ն․ և։



Բանին կարապետ եղեալ գայ յանապատէ․ և ազդողական ձայնիւ յերկրի քարոզէ։ Սուրբն Յովհաննէս որ և մարգարէ․ ա͞ծորդւոյն գուշակ եղեալ մեզ յայտնէ․

Կանոն Ծննդեան Յովհաննու Մկրտչին։

ակ

Ա՛րեգականն արդարութէ
ծագման արուսեակդ ա
ռաւօտեալ. Նախընթաց
Ճանապարհի յորդւոյն աստուծոյ ամենօրհ
նութեան սուրբ յօհաննէս. առ քրիս
տոս բարեխօսեա վասն անձանց մե՟ րոց
Բարձրելոյն անճառ խորհրդոց տեսանող
իմաստունք հոգւոյն. ի յորովայնէ մաք
րեալ տաճար աստուծոյ և բնակարան
սուրբ երրորդութեանն. առ քրիս։
Գաբրիէլ հրեշտակապետն առաքեալ
առ զաքարիաս. աւետարանել ըզհրա
շալի ծնունդ քո սուրբ յամուլ ծե
րոյն եղիսաբեթէ. առ քրիստոս։
Դասապետն երկնից զօրացն երևեալ
Ղու քահանայապետին. յորժամ մըտանէր
I·20 ի սրբութիւն սրբոցն խնկարկել
ըստ օրինացն ի տաճարին. առ քրիս։
Եւ տեսեալ զանհիւթականն ի ձեւ
մարմնոյ յաջմէ սեղանոյն. պակուցեալ
յերկիւղ մահու սասանելով և հաստա
տիւր բանիւ հրեշտակին. առ քրիս
տոս բարեխօսեա վասն անձանց մե՟։

Օ գէ

Ո գերագոյն քան ըզբնութիւն լու-
եալ զեղանակ ծընընդեանըն քոյ. սաս-
կացեալ հիանայր զաքարիաս և համրա-
ցեալ պատժիւր պապանձեալ լեզուաւն. առ : Ղուկ 1. 20
Էակից բանըն ի հօրէ իջեալ յերկնից ըզ-
կընի ձայնիդ. ուստի գաբրիէլ վեր ա-
ռաքէր զկոյսըն մարիամ առ սըրբութե
յղացեալըն ըզքեզ յորովայնի. առ. քրիս-
տոս : Ընդ ժամանել ձայնի ողջունին
մարիամու առ եղիսաբեթ. խաղացեր
ձայնդ ընդ առաջ բանին աստուծոյ յո- Ղուկ 1. 44
րովայնէ ամլոյն երկըրպագելով. առ :
Թագաւորըն բոլորից պարածածկեալ
յարգանդի կուսին. զոր ծառայդ հաւա-
տարիմ տեսեալ հոգւովըն սըրբով և բե-
րանով մօր քոյ օրհնաբանէիր. առ.
քրիստոս : Ժառանգաւոր հին օրինացն
արդարութե ընդ մարգարէիցն. և նա
խաշաւիղ հետևողաց անձուկ ճանա-
պարհին նոր օրինացս ընդ առաքելոցն.
առ : Ի յանապատի հրեշտակական վա-
րուք բնակեցար ըստ եղիայի. կերակրե-
լով մարախ և մեղր վայրենի հին և նոր Մար 1. 6
պատուիրանաց օրինակ կաց. առ :
Լուսապայծառ շնորհօք հոգւոյն պայծա-
ռեալ

թեալ ըստ ներքին մարդոյն. Իսկ արտաքուստ ամենամաքրական ստեւոլըն ծածկեալ ըստ արխրադոյն զգեստու նախահօրն. ա՛ռ: Խորհրդով մաքրագունիւ արդարապէս առլիացեալ. Ի յօրինակ մեռելութեան գօտի մաշկեղէն ընդ մէջ ածեալ քո երբ եղար. ա՛ռ:

Ծննդեան հոգւոյն սրբոյ զորս յադամայ յորդիս Աստուծոյ. Ի քէն սկիզբն և օրինակ եղեալ ի յորդանան մկրտութեամբն յապաշխարութի՝ ա՛ռ:

Կարապետ թագաւորին երկնաւորի առաքեցար. պատրաստել ըզ ճանապարհս նորա յոգիս մարդկան ըստ եսայեայ քարոզելոյն. ա՛ռ: Ջուր կիզանող զմեղս մարդկան գուշակեցեր զառաջին գա-

Մաղ. լստեանն տն. Իսկ դատողական հեծա-

3. 12 նոցաւն մաքրել ըզկալ աշխարհի ըզ միւսանգամ գալստեան խորհրդով. ա՛ռ

Եսա. քրիստոս: Ձայն բարբառոյ յանապա-

40. 3 տէ զքեզ անուանեաց եսայիաս. և հրեշ-

Մաղ. տակ տն առաջի առաքելով ծանոյց հե-

3. 1 գուոլըն մաղաքիաս. ա՛ռ քրիստոս:

Ղեւտական քահանայութիւնն յահարոնէ ի քեզ կատարումն. և ճշմարիտ քահանայ:

հանայութիւն որ ի քրիստոսէ ի՛քեն ըս
կիզբըն հաստատութեան. ամ։

Ճրագ օրինայցըն մօսխի լուսաւորութեանն Սաղ.
խորայնի. և խնամօղի արեգականըն 131.
յառաջընթաց ամ. ի յերկիր ծագմամբըն 17
ի կուսէն. ամ։ Սըկըրոտեւ ըղ գոլորից Յոհ.
աստուածն ամ. քեղ եկեալ հրաժարէ իր 5. 35
տեսանելով զգերամպայծառ լոյս ու ծու
թեանն ընդ հողեղէն բնութեանըս պա
րունակեալ. ամ. քրիստոս բա։

Յորժամ էջ ի յորդանան հուրն ու ծ
ի՛քեն մըկըրտիլ. վերնականն իշխանու
թիւնքըն զահի հարեալ զարմանային
նորահրաշ տեսլեամբըն. ամ։

Որ հեղիաս նախգալըստեանս քարոզ Մաղ.
ըստ հընոյն որ ի յերկրորդին. արժանի 4. 5
եղեր լըսել հայրական ձայնին ըզմիած
նէն զայն որդի իմ սիրելի. ամ։

Շնորհատուն արարածոց որ ի հօրէ հա
`գին ճըշմարիտ. աղաւնակերպ տես
քեամբը քեզ երևեցաւ զնծութիւն իւր Մտթ.
ծակցին յոյսանեալ աշխարհի. ամ։ 3. 16

Որ ըղխորայցս անճառելի անօրէնութեանըն Յոհ.
քի ոչ լուծանել իր. զհամաշոյ երրոր 1. 27
դութեան անձնաւորութիւն տեսանել

ի յոր

ի յորդանան արժանի եղեր. ալ.
Զոր իշխանըն խաւարի յաշխարհական
մեղաց ծովէս. հալածեցաւ ջրովըն յոր
Սաղ դանանու մկրտութեամբըն իքէն ըզգըլուխ
73 14 վիշապին ի նմա խորտակեաց. ալ.
Պարանգլուխ մարգարէիցն օրինադրէք
զդառն օրինաւ կին. իսկ դու ըզճըշմա,
րիտ ծնեալըն ըզքրիստոս անուանեցեր
գառն այ եւ բարձող մեղաց. ալ.
Յով Ջուր մաքրութեան իքէն մկրտելոցն
1.29 յարքունս իմաստից. ապաստանըեալցն յեր
Առակ կիրդ հաստատմամբ տապարին եւ խոնարհացն
3.10 ի խորան իմաստութեան. ալ. Սահ րուայ
արդարութեան՝ եղեր անձուկ ճանապար
հաւն. առաջնորդեցեր որդւոց մարդ
կան ելանել յերկինս անմարմնական մա
րուց քոց օրինակաւ. ալ.
Սիրոյ անմահ եւ երկնաւոր սուրբ փե
սային եկեղեցւոյ. փեսաւէր եւ հրաւէ
րակ առաքեցար հարսին որդւոյ թա
Յով գաւորին. ալ. քրիստոս:
3.29 Վարդապետին տիեզերաց աւանդեցեր
զքո աշակերտեալսն. եւ ըզգլուխ գիշե
րային ճրագի քո բանի համաշխարհածաւ
արեգականն աւետարանեա. ալ. քրիստոս

Տիրա

Տերամկան նոր օրինացն եղեր քարոզ առ օրինազանցսն. որով մատնեալ բանտից եւ կապանաց մեղադրութեամբըն հերովդիայ. առ:

Ղ ձա
3. 20

Բազմեալ խընջոյս արքայութեան յաւուր ծննդեան մահաբերին. զքեզ որ խայտալով ծընաւր տամարանկդ անապատի. կաքաւելով խընդրեաց ի մահ դուստր հերովդիադայ. առ. քրիստոս:

Ցընծութեան աւետաբեր եղեր հոգւոցն որք ի դըժոխս. կարապետ կըրկին իջմանն տն ի ստորինսն կոչմն երկրի որով լուծան երկունք մահու. առ:

Կուսութեան մարմնով յերկրի յաշակերտաց քոց պարսաւ ծա ծնեալ. եւ աննութեան հոգւով ընդ քրիստոսի յարքայութեն երկնից վերափոխեցար. առ:

Փութացիր մեզ յօգնութիւն առ ի վերուստ սուրբ յօհաննէս. առաքեալ եւ մարգարէ եւ կարապետ եւ մկրտիչ որդւոյն աստուծոյ. առ:

Քահանայապետին քի որ ի խաչին պատարագեալ. քահանայդ ինքնանուէր մատո զպատարագս երգաբանիս եւ տօնողացս շնորհեա զքաւութիւն. առ.
քրիստոս:

գծ
հ
Որ աւետաւոր քում գալըստեանդ առաքեցեր զհրեշտակապետըն գաբրիէլ. աւետարանել զսքանչելեաց զաւետեօք ծընունդ յառաջընթաց կարապետին քո յօհաննու. մաղթանօք սորա կեցո զմեզ տէր աստուած հարցըն մերոց: Որ յարգանդին լըցեալ հոգւով երկըրպագեաց քեզ յորովայնի սուրբ կուսին. զոր եսայիաս վերագոչեաց ձայն բարբառոյ յանապատէ. որ պատրաստեաց զեկեղեցի հարսըն մաքուր ուր փեսային մաղթանօք սո: Որ բոցեղէն հոյլք քրոբէիցն ոչ իշխէին հայիլ ի փառս աստուածութեանդ. սա հողանիւթեայ գոլով բնութեամբ մըկըրտեաց ըզքեզ մարմնով ի ջուրսըն յորդանանու. մաղթանօք:

գ
Զտէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Որ աւետաբեր գալըստեան բանին. առաքեցաւ ձայնն յանապատէ. ըզտէր օ: Որ սըրբութեան սուրբ կուսածին որդին. ի յանմըրդոյն հայցէր մաքրել յորդանանու. ըզտէր օր:
Մտթ. 3. 15
Որ ըզծածկեալ խորհուրդ սուրբ երրորդութեանն. կարապետին յայտնեաց հոգին աղաւնակերպ իջմամբ. ըզտէր:

Երկնաւոր փեսայ անճառաւոր լոյս ի մաննալր. որ ի յերկնից իջեր. ի սէր հարսին քոյ եկեղեցւոյ. զոր խօսեցաւ քեզ բարեկամն և փեսաւէրն քո յօհաննէս. սորին մաղթանօք ողորմեա: Փառակերպելոյն անհաս և անտես ի սերովբէից. սրբութեանց սբ և տէր քերովբէից. խոնարհեցար ի յորդանան. հայցելով ի ծառայէն. մկրտութիւն ջրոյ ի լուանալ եղ մեղս ադամայ. սորին մաղ: Որ յամենորդւոյն վկայեցար զառն աստուծոյ բարձող մեղաց. զոր գերազանցն արդարոց. ծանուցեր մեծ ի ծնունդս կանանց. Եւ Ս ձրանգ օրհնաց. որ և ի դժոխս զփրկական զալուստն քո քարոզեաց. սորին մաղթանօք ողոր:

Այսօր ցնծան հրեշտակք ի յերկինս. յիշատակաւ հողանիւթ հրեշտակին ծն. որք համագումարեալք ձայնիւն բարբառոյ. երգեն զօրհնութիւնս հօր ի բարձունս: Այսօր ցնծան հողեղէնք արդարոց. նահապետաց և մարգարէից ծն. ձայնակցել լինել մեծին ի ծնունդս կանանց. երգեն զօրհնութիւնս որ դւոյն միածնի· Այսօր ցնծան դասք առաքելոցն· տօնախմբելով զյիշատակ մեծի մկրտչին Յնի· որ առաքելոյն է սկիզբն և մարգարէից լրումն· ընդ նոսին և մեք բղխեցելոյս ի հօրէ երգեմք ընդ փառս ի բարձունս։

դկ
ձկ
Մարգարէից գերագոյն և մեծի ի ծնունդըս կանանց· որ ըզ տնօրէնութիւն աստուած որդւոյն ի յարգանդի ծանեար հոգւովն· աղաչեա զած վասն մանկանց եկեղեցւոյ։ Յորովայնէ յարովայն երկրպագող քրիստոսի որ ըզ հօրն ած մերով բնութե մկրտեցեր ի յորդանան՝ աղաչեա զնա։

Կատարումն օրինաց և նախասկիզբն շնորհաց· որ հոգւովն ի դըժոխս քարոզեցեր ըզ փրկութիւն դամբանեալ մարդն քրիստոսի· աղաչեա։

Ճշ
Այսօր ցնծայ եկեղեցի ի հոգևոր հարսանիս· զոր պատրաստեաց ձայն բարբառոյ հարսն մաքուր փեսային։

Այսօր փեսաւէրն և բարեկամն ընդ երկնաւոր փեսային· միաւորեաց զեկեղեցի փոխադրելով ի յերկինս։

Այսօր շնորհեցաւ մեզ դեղ կենաց նըշ-

խարք

խաչըք տէրէն ոսկերայց. ի ձեռըն տըր լու-
սաւորչին հայաստանեայց աշխարհին։

Կանոն Յօհաննու մկրտչին։

դ ձ

Զմարգարէն բարձրելոյն և զթա-
գաւորին զինուոր. որ և ի
ծննդըս կանանց մեծ կոչե-
ցաւ. յօրհնութիւնս հոգևորս պա-
տուեսցուք։ Զմիածնին կարապետ և
ըզբանին ըզձայն. որ յորովայնէ զքս
յառաջ գուշակեաց. յօրհ։

Զանապատն բնակիչ և շնորհացն
քարոզօղ. որ և ի դժոխս ըզփրկու-
թիւն քարոզեաց. յօրհ։

Որ յորովայնէ ընտրեցար յաստուծոյ մե-
ծոյ. քարոզօղ ճըշմարտին որդւոյն ած՟յ.
տէ՟ր յօհաննէս. անդադար բարեխօ-
սեա վասն անձանց մերոց։

դ կ

Որ յանապատէ կոչեցար ի տեառնէ մ՟ւնէ.
մըկըրտել ըզբոլորից բարձօղըն մեղաց
տր՟ յօհաննէս։ Որ զմարգարէից ընկա-
լար ըզպատմութիւն. և ըզշնորհս ճըշմա-
րիտ տր՟ առաքելոցն. տր՟ յօհաննէս։
Որ մոլեգնութեամբըն հերօդիայ ընկա-
լար

ըար ըզ վաճ մխձան. և ի դասս հրեշտակաց վերակարգեցար. տր՟ յօհ՟:

Որ մարգարէիցն իջելոց ի դըժոխս. աւետարանեցեր ըզ գալուստ որդւոյն այ՟.
տր՟ յօհաննէս:

գձ հ Ուրախանայ այսօր եկեղեցի քո Քս՟. ի տօնախմբեւ զօր յիշատակի կարապետին քում յօհաննու. սովաւ ըզքեզ միշտ օրհնեմք մք ած՟ հարցն մերոց.

Որ մեծ ի ծնունդս կանանց ի քէն՝ վըկայեցաւ. ի յորովայնէ յառաջ գուշակեաց զանձն քո զմարդեղութիւն. սովաւ:

Յոր վեցթևեան սրօբէքն ոչ իշխէին հայիլ ի փառս քո Քս՟. սա արժանաւորես ձեռնադրեաց ըզքեզ ի յորձանսն յորդանանու. սովաւ ըզ:

գ Զտր՟ օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Օ կարապետին յօհաննու կատարելով ըզ յիշատակս. անդադար ձայնիւ զած՟ հայր օրհնեցէք:

Օ երանեալ մըկրտչին մեծարելով ըզ տօնս. հոգևորական ձայնիւ զքս՟ թագաւորն. օրհնեցէք:

Յանապատի բարբառոյ ձայն. և աւետաւոր արքայութեանն. ընդ նմին

զճշմա

զճշմարիտ սուրբ Հոգին օրհնեցէք։

Որդ ճշմարտութեան սուրբ Յոհաննէս մկրտիչ որ ծանուցեալ ի յերկրի. աղօթիւք նորա տէր լուր մեզ և ողորմեա։ Մարգարէ և առաքեալ աստուածորդւոյդ. և ձայն բարբառոյ ազդարարօղ տիեզերաց. աղօթիւք։ ռ

Որպէս զարուսեակըն ծագեալ ի յերկրի. եղև կարապետ արեգականդ արդարութեան. աղօթիւք։

Առաքեալըն յայս կարապետ. մեծն ի մարգարէս մկրտիչըն յոհաննէս. պատրաստէր ճանապարհս թագաւորին յաւիտենից։ Ընկալեաց և ասէ չեմ ես Քրիստոսն. այլ առաքեալ եմ առաջի նորա. և հարսին եկեղեցւոյ փեսայ Քրիստոս է արքայն երկնից։ Տեսանէր ըզյիսուս զի գայր առ նա. աղաղակեաց և ասէ ահա գառն աստուծոյ որ եկն ի բառնալ զմեղս աշխարհի։ տ Յօհ 1. 20

Կանոն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

բձ Ով երջանիկ տէր մեր Գրիգոր սրբութեանցն պաշտօնեայ. և առաջնորդ բանաւոր հօտի:

Ընդ քեզ ունիմք բարեխօս առ Յիսուս միածինն. և աղաչօղ վասն քո ուխտաւորաց: Կանխեա խնդրեա ըզթողութիւն յանցանաց. ի քէն աշակերտաց լոյս:

Ով երանելի տէր մեր Գրիգոր ընդ քեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց: Որ ի մոլութենէ բռնաւորին ոչ զանգիտեցեր. ընդ քեզ:

Որ ընդ անմարմնոցն դասս վերակացեալ ես. ընդ քեզ:

դկ Արմատ ճշմարիտ ծայլին օրհնութեանցն. և հաստատութիւն հաւատոյ ազգի մարդկան. տէր սուրբ Գրիգոր. ի մաղթողական աղօթս քո հայցեա վասն մեր ի Քրիստոսէ: Ընտրեալ յԱստուծոյ քահանայապետ ճշմարիտ. և հովիւ հոգևոր բանաւոր հօտի տէր մեր Գրիգոր ի մեզ: Պսակ վայելչութեան եկեղեցւոյ Քրիստոսի. և առաջնորդ կենացն յաւիտենից տէր մեր Գրիգոր. ի:

Որ

Ո՛ր քսանուէր կուսամբքըն ծագեցար որպէս զարեցմ գամէն. Եւ լուսաւորեցեր ըզհայաստան աշխարհս ածգիտութե. տր սուրբ գրիգոր. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց։

Ո՛ր քոյին առաքինասէր ճրգնոցմ ւէդ. վերափոխեցար ի լուսեղէն յերկնային խորանսն. տր սուրբ գրիգոր։

Վ. Եւ պայծառացն եկեղեցիք քրիստոցմսի. փառաւորելով ըզմիասնական սբ զերրորդութիւնն. տր սուրբ։

ըձ
հ

Ո՛ր ժառանգեցեր ըզսիրելի և զհաւատոյ ընմ քո պաշտօնեայն ըզտր գրիգոր. Եւ ի ձեռն նորա լուսաւորեցեր ըզհայաստան աշխարհս. ընդ քեզ միշտ օրհնեմք տր ած հարցն մերոց։ Ո՛ր ետուր համբերութիւն անտանելի չարչարանաց սրբոյն գրիգորի. և նորին ժուժկալութեամբն լուսաւորեցեր ըզհայաստան աշխարհս. ընդ քեզ միշտ օրհ։ Ո՛ր նորին սբ աղօթիւք բարձեր զխաւար կռապաշտութե ի հայաստան աշխարհէ. Եւ արարեր երկրպագուս ամենասբ երրորդութեանդ. ընդ քեզ։ Բ՝ զտր օրհնեցէք. Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Ո՛ր

Արդ եկայք հաւատացեալք և կոչեցեալք յորդեգրութիւն սրբոյն Գրիգորի․ օրհնեցէք և բարձր արարէք զածն ամենեցուն։ Ցնծութեամբ տօնեսցուք ըզ յիշատակ հայրապետին մերոյ՝․ և ընդ նմին գովեցէք և բարձր արարէք զԹագաւորըն մեր Քս։ Քահանայք և պաշտօնեայք հոգևորական հընչմամբ գովեցէք ընդ սրբոյ հայրապետին՝․ և բարձր արարէք սուրբ զհոգին Ճշմարտութեան։

ո Թինա իմ․ Բարեխօսութեամբ քահանայապետին քոյ և վըկային․ կեցո զմեզ բազում ողորմ։ Աղաչանօք սրբոյն Գրիգորի լուր մեզ որ միայնդ ես բազում ողորմ։ Նորին աղօթիւք որով ուսաք ճանապարհ կենաց․ քաւեա տր ըզ յանցանքս մեր։ Առաջնորդ հաւատոյ և լուսաւորիչ անձանց մերոց տէր որ Գրիգոր․ Եկայք հաւատացեալք․ ի ձեռըն նորա հանցուք աստուծոյ գոհութիւն։

Մեծ խոստովանողըն Քրիստոսի և ըզ չարչարանս յանձն առօղ վասըն մեր տէր սուրբ Գրիգոր․ Եկայք լուսաւորեալք ի ձեռըն։ Քահանայապետ այ

և պաշտ

և պատմօղ ա՟ծային օրինաց տէրութ գրի
գոր. Եկայք աշակերտեալք ընդ նըմա
երգեսցուք փառք ի բարձունս աս
տուծոյ:

Հրաշափառ ա՟ր ծ և միշտ բարեխօս դծ
մեզ. որ յառաջ գիտութ՟բ ընդ փրկու մկ
թի հայաստանեայց ընկալ զլուսաւորեալն. ի
պարթևական մեղապարտ ազգէն լու
սաւորիչ մեզ շնորհեցեր. վասն որոյ բա
րեխօսութ՟բ սորա փրկիչ կեցո ըզմեզ.
այժմ և ի քո յահաւոր գալստեանն:
Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբ
գրիգոր. զանտանելի ըզ չարչարանս ի
յանձն էառ. և երիւք հընգօք ամօք ի
մէջ թունաւորացըն բնակէր անդընդ
ային տանջանօքն խլիրդային. վ՟ս որոյ:
Հրաշագործ քո բանիւդ և մեծ ողորմու
թ՟բդ. երևեալ բժշկէր ըզ հարուածեալսն
ի դիւաբաղխ սատանիցն. երկրպագու
առնելով զամենեսեան սուրբ երրորդու
թեանդ. վասն:

Հովիւ քաջ բանաւոր հօտի՟ր սբ գրի դկ
գոր. համատարածեցեր զհիմունս եկեղեցւոյ ձշ
ի հայաստան երկրի ի վերայ հիմանն սբ
առաքելոցն: Հովիւ բարի և առաջնորդ
կենացըն

կենացըն յաւիտենից տէր սբ գրիգոր․ հաստատեա զանձինըս մեր հաւատով ճշմարտութեան մբ ի վերայ հիման սբ եկեղեցւոյ։ Արդ աղաչեմք ըզքեզ հայր վարդապետ և տր՝․ բարեխօսեա քն՝ տյ մերոյ կեցուցանել զանձինըս մեր։

դճ
հբ
Որ կոչեցար յորդեգրութի՝․ հօրըն երկնաւորի ով երանելի տէր սբ գրիգոր․ և եղեր վըկայ ճշմարիտ քրիստոսի տյ մերոյ վասն ժողովըրդեան քո․ հայցեա ի տեառնէ ըզքաւութիւն։ Որ համբերութեամբըդ քով ստացար քեզ ժողովուրդ սեփականս և ընտրեալս․ և նորափետուր զարդարեցեր ծնընդեամբ սուրբ աւազանին վասն ժո։ Որ մոլորելոցս ի խաւարի․ բացեր զդուռըն լուսոյ ճշմարիտ ածգիտութեն․ և արժանաւոր արարեր ըզմեզ ժառանգորդ լինել կենացըն յաւիտենից․ վասն ժողովըրդեան։

* * *

Կանոն Որդւոց և Թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։

ակ
Հ

Որ ըզլոյս ածային քոյ գիտութե հիւսիսականն ազգաց ծագեցեր. և ի խաւարէ կռապաշտութեան վերածեր ըզմեզ ի ձեռն սուրբ լուսաւորչին. օրհնեմք ըզքեզ ած հարցն մերոց։ Որ վերըստին զարդարեցեր զեկեղեցիս հայաստանեայց առաքելափայլ ճառագայթիւք լուսազարդեալ շառաւիղօք սրբոյն գրիգորի. օրհնեմք։

Որ ըզբանն քո հրամանի քարոզեցին հաւատացելոց. յանդիմանեցին ըզբռնութիւն թագաւորաց և ի վերայ ածային քո օրինաց նահատակեցան. օրհն։

Գ

Զտր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Որ զերանգոյն հնոյ օրինաց քահանայութեան զնորս զարդարեաց. եկեղեցիք հեթանոսաց ըզնորոգօղ բնութեանս քրիստոս. օրհնեցէք։ Ո քահանայապետքն ճշմարիտ ըստ կարգին մելքիսեդեկի. ե յիշատակի քահանայապետացս աստուածայնոյ քահանայք հոգեւոր երգով. օրհնեցէք և բարձր արա։

Որ

ո Որ հրաւիրեցեր զորդիս մարդկան յորդեգրութն հօր քո որդի աստուծոյ. և կոչեցեր արքայութեան քո ժառանգութն ի ձեռըն սուրբ հայրապետացն. աղօթիւք սոցա ողորմեա։ Որ լուսաւորեցեր զեկեղեցիս հայաստանեայց լուսով քով քրիստոս. և զարդարեալ նորացուցեր պայծառ ծաղկամբ շառաւիղօք սըրբոյն գրիգորի. աղօթիւք սոցա։ Որք զընթացս իւրեանց կատարեցին ըստ հաճոյից կամաց քոց քրիստոս. նահատակեալք ճըգնութեամբ ընդդէմ թըշնամւոյն. և փոխեցան երկնից յարքայութիւնդ. աղօթիւք։

ա Այսօր ընդ երկնային զուարթնոցն ժողովուրդք հայաստանեայց. տօնելով զյիշատակ սուրբ հայրապետաց շառաւիղաց սըրբոյն գրիգորի. օրհնեցէք զհայրն երկնաւոր։ Այսօր որդիք թորգոմայ ծընեալք աւազանաւն յորդիս սիոնի. ի յիշատակի հարցն սըրբոց որդւոց մեծի լուսաւորչին. գովեցէք զորդին միածին։

Այսօր երկնաւոր քահանայութեն հաղորդ քահանայք սուրբ եկեղեցւոյ. ընդ քահանայապետս աստուածային օրինօք պատուեալս բարեբանեցէք զհոգին ճշմարիտ. Երգելով ընդ փառս ի բարձունս:

Աստուածային հաւատոյ հարցն սուրբ բոց դաւանութեան. ծագեցաւ քեզ ընդ հանուր լոյս հայաստանեայց սուրբ Արիստակէս. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց: Բանաւոր հօտի քո ընտրեալ հովիւ քաջ. Ի հօրէն լուսոյ բղխեալ շնորհիւդ բարի տէր Վրթանէս. անդա: Գովեալդ ի վկայս հօրըն մեծի համածնման. քաջութեամբ զանօրէնաց խորտակեալ զպատկերն. տէր սուրբ Յուսիկ. անդադար բա: Դասակցեալ անմարմնոցն մաքուր կուսութեամբ. Ճշմարիտ քահանայապետ վկայ քո սուրբ Գրիգորիս. անդա: Երկնայնոցն ի յերկրի հաղորդ ճգնութեամբ. յանդիմանելով ընդ թագաւորն կատարեցար վասն անուանըն տեառն սուրբ Դանիէլ. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

դկ
մկ

Կանոն սրբոյն Ներսէսի Հայրապետին։

ըկ

Որ ընդ լոյս անճառ շնորհաց ամենայն քոյ գիտութեան. ծագեցեր յաշխարհս հայաստանեայց. գթած հայր երկնաւոր գթալ ի մեղուցեալքս։ Որ ընտրեցեր յորովայնէ ըզ մաքրեալն հոգւով սուրբ ըզ Ներսէս. ժառանգել ըզ վիճակ հայրենի. հովուել արդարութեամբ և իրաւամբք։ Որ օրինօք ճշմարտութեան ըն զարդարեաց զեկեղեցի. կարգաւորեալ բարեպաշտութեամբ. սորին աղաչանօք խնայեա ի մեզ Քրիստոս։

Որ յերջանիկ ընտրեալ սրբոց հայրապետացն ժողովոց. գերագոյն փառօք պատուեցար սուրբըդ Ներսէս. դաւանեալ ած զհոգին ճշմարիտ ընդ հօր և որդւոյ։ Որ ըզ ծածկեալ խորհուրդ ապագայից ժամանակաց. յայտնեցեր սրբոյն Ներսէսի. սորին աղաչանօք խնայեա ի մեզ Քրիստոս։ Որ ի վերայ պատուիրանաց թագաւորին երկնաւորի. ըզ բաժակ մահու ընկալար ի թագաւորէն և փոխեցար

ի յերկինս ի լուսեղէն յառագաստն:
Այսօր տօնէ եկեղեցի ընդ յիշատակի սրբոյն դճ
ներսեսի. հայաստանեայց լուսաւորչի հ
արի և քաջ հովուապետի ընտրեալ
ի գլուխ հօտին քրիստոսի. աղաչանօք
սորա կեցո զմեզ տէր ա՟ծ հարցն
մերոց: Որ յարմատոյն աբրահամու
վերաբուսեալ ծաղիկ հաւատոյ. սուրբըն
ներսէս սիւն հայաստանեայց շառաւիղ
անմահ տնկոյն պտուղ լուսոյ սուրբ
լուսաւորչին. աղաչա՟: Որ օրհնիս ի հրեղինաց
անլռելի ձայնիւ հնչմամբ.
շնորհեցեր մեզ դեղ կենաց զանմարմնականն
վարուք մաքրեալ ըզհողանիւթ
նշխար սրբոյն ներսեսի. աղաչանօք:
Ըզտ՟ր օրհնեցէք բարձր արարէք ըզնա Գ.
յաւիտեանս: Որ յայտնեայն այսօր ընդ
գանձն ա՟ծայինն՝ հայաստանեայց սուրբ
եկեղեցւոյ. ընդ հայրն երկնաւոր օրհնե՟:
Որ ծագեայն այսօր լոյս խաւարելոց
ի յորդւոց հօրըն լուսոյ. զորդին միածին
գովեցէք բա՟ր: Եկայք մանկունք
սուրբ եկեղեցւոյ. զարդարեալք ի շնորհաց
հոգւոյն. զհոգին ճշմարիտ բարեբանեցէք.
բարձր:

Որ

ա Որ ատեցեր ողորմութիւն շինել զաշխարհս ի սկըզբանն. ողորմեալ որդւոց Ադամայ ետուր յաղագէն ապաշխարողնեաց հովիւ ընտրեալ զսուրբըն ներսէս. աղօթիւք սորա ողորմեա մեզ աստուած։

Որ ի ստունգանել թագաւորացն աստուածային քո օրինաց. ըզպատուհաս բարկութեան մերոյ յառաջագոյն ժամանակօք յայտնեալ ցուցեր սրբոյն ներսէսի. աղօ։

Որ պատուական արեամբըդ քո ազատեցեր զաշխարհս յանիծիցն. փըրկեա ըզմեզ ի նեղչաց մերոց եւ ազատեա յանօրինաց. բարեխօսութեամբ սըրբոյն ներսէսի. աղօ։

գծ ա Այսօր զուարճացեալ տօնեն երկնայինքն ընդ մարդկան. պարակից եղեալ փըրկութեան մերոյ. քանզի յայտնեցաւ մեզ հոգեւոր գանձըն լուսոյ սուրբ ելեալ արեգականըն ճառագայթ սուրբըն ներսէս. բարեխօսութեամբ սորա տէր պարգեւեա զխաղաղութիւն հայաստանեայց աշխարհի։

Այսօր վերընատին նորոգեցաւ քահանայականն գաւազանն. գեղեցկանայէս ծաղկեալ պայծառութեամբ. քանզի շնոր-

հեցաւ

հեզաւ հովիւն քաջ բանաւոր հօտի. յարմատոյ լուսաւորչին՝ բողբոջ բուսեալ սբրն Ներսէս. բարեխօսութեամբ սորա տէր հաստատեա զիշխանութիւն հայրապետական աթոռոյ։

Այսօր մեծապէս փառօք ցնծայ թագաւորական գաւառն՝ ընդ հաշտութե սիրոյ սբ՝ հայրապետին. քանզի էհաս ի յօգնութի օրէնադրօղին թագաւորաց. մարտակից զինուորական դասուն սբրն Ներսէս. բարեխօսութեամբ սորա տէր բարձրացո զիշխանութիւն թագաւորական աթոռոյ։

Որ ընտրեցար ի յաստուծոյ հովիւ դձ
բանաւոր հօտի ով երանելի տէր մկ
սուրբ Ներսէս. արժանաւոր օծման սուրբ հոգւոյն աղաւնակերպ իջմամբ որպէս յորդանան. վասն ժողովրդեան քո խնդրեա ի Քրիստոսէ ըզթողութիւն։ Որ յարմատոյ բղխեալ բարեաց ծաղիկ սուրբ հաւատոյ ով երանելի տէր սուրբ Ներսէս. լուսաւորեցեր իմաստութեամբ զեկեղեցիս հայաստանեայց ըստ սրբոյ հօր լուսաւորչին. վասն ժողովրդեան։

Որ յանդիմանելով ըզթագաւորն համագոյն մեծին յօհաննու ով երանելի տէր սուրբ ներսէս. Եւ ի վերայ պատուիրանաց ըզբաժակ մահու արբեալ ընդ անմահիցըն դասս վերակարգեցար·
վասըն։

գկ ձչ Այսօր ցընծայ եկեղեցի ընդ անմարմնոցըն դասակցեալ տօնելով զյիշատակըս քո տէր սուրբ ներսէս. որ ի հոգւոյն սըրբոյ աղաւնակերպ իջմամբ վըկայեցար. բարեխօսեա առ Քս վասն անձանց մերոց։ Քահանայապետ ընտրեալ արժանապէս շնորհօք հոգւոյն բաշխեցեր զփըրկականն մարմին և զարիւնըն Քի. յորում հըրեղէն սիւն ի յերկնից իջեալ. բարեխօսեա։

Արդ աղաչեմք ըզքեզ լուսաւորիչ հոգւոց մերոց նըմանեալ մօսէսի նախամարգարէին մեծի. լուսափայլեալ դիմօք ածահրաշ տեսլեամբ. բար։

Շարական սրբոյն Իսահակայ Հայոց Հայրապետին։

մկ գկ Որ յարմատոյ հարցըն սըրբոց մեզ դաւաղան բըղխեցեր. ըզիսահակ մեծ հայ

րապետն հովուել ըզ հօտ քո քրիստոս։
Որ ըզ խաւարն անգիտութեան հայաստանեայցս լուծէր. զիմաստութեան ծագեալ ըզ լոյսն սովաւ որդւոց թորգոմայ։
Որ զհանդերձեալ խորհուրդ քո տէր տեսլեամբ սրբոյն ծանուցէր. յիշատակի սորա ընկալ ըզ տօնողացս աղաչանս։



Կանոն Սրբոց Հռիփսիմեանց։ Օրհնութիւն։

Դ Կ Անձինք նուիրեալք սիրոյն քո՝ երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք. և պարծանս ձեր բարձրացեալ տօնէ. Մայր Սիոն դստերօքն իւրովք։

Բարբառք երկնաւորք լցին զերկիր. քանզի հոտ անուշից բուրեցայք ի քէն. ողջակէզք բանաւորք և զոհք փրկութեան և որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ։ Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ յիմարեցոյց զթագաւորն և պակեան հեթանոսք. Ի դեղ ըսքանչելի Աստուածատուր կուսանացն. տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան տօնեցին։ Դարձեալ վերըստին արարչագործ զօրութեամբ. և դարձեալ Եդեմ Աստուածատունկ զարդարի. քանզի ծառըն կենաց տընկեցաւ ի դրախտին՝ բերելով մեզ պտուղ զերանելին Հռիփսիմէ։ Երկունք մահաբերք անիծիցըն լուծան՝ և Ադամ վերըստին Աստուածակերպ ճոխանայ. փոխանակ Եւայի դստերք նորա. մարտիրոսք և կուսանք ընծայեալք աստուծոյ։ Որք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին՝· և կանայք ի յերկինս գրեցան զինուորք· կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին՝· խաչակից լինելով կուսածին արքային։ Ի զարմացուցին և ի վեր քան զհրաշս· երկրորդաց և բանից հրեշտակաց և մարդկան՝· քանզի էին ած ամենազօր զօրութեամբ՝· խոնարհեալ տեսանէր զհանդէս կուսանացն։ Ընկերք միամիտք մարմնական կենցաղոյս· նահատակք հաւատովք և հոգւով միացեալք· միաբան ընթացեալք ի տեղի ճակատուն· զինեցան հաւատով և կացին յանդիման։ Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց· և տկար կանայքըն փշրեցան զինու· Թագաւորըն պերճացեալ զօրութեամբ և փառօք· ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր։ Ամբոխեալ բազմութեան անզգաց և աղանդոց ոչ զօրէին առ մի նահատակն· քանզի հասեալ ի թիկունս աներևոյթ օգնութիւն՝ խորտակեաց յաղթանակէս ըզգաղտնի պատերազմն։ Ի վերայ միոյ պատուական մարգարտի· խաղացին ցնծալով ամենայն հեթանոսք. արևմուտք յարևելս ընթացեալք հասին. քարոզել յայտնապէս ըզ չըքնաղ տեսութիւն:

Լուսան թագաւորք և լըցան խընդութե. որսալ յանձն առին ըզ գաղտնի մեծութիւնն. պարգևել իրերաց խատանոսյին գանձիւք. և ծածուկ հընարիւք գողանալ ի մոգեանց:

Խորհուրդ հոգևոր յըղութե ցըն յայտնիւր. և երկունըք փըրկութե աշխարհի ձեպէին. քանզի կամըք վերին հրամանին քաղցրացեալք. իջուցին ի վերուստ ըզ պարգևս փըրկութե:

Օնան կուսանք ազգըս բաղձումն. և մարըք մանկունըք ըզ հրաշալրակըս ծերոց. ի գիրկըս սըրբութեան աղօթից և պահոց. աճեցին հաւատով զարդարեալք ի Քրիստոս: Կանայք պատուականք քաղաքաց և ազգաց. վաճառականք առատք անյայտ մարգարտին. եդին զանձինըս գըրաւականըս բազմաց. և եղեն փըրկանք անծանօթ աշխարհին:

Հռիփսիմէ մեծ խորհուրդ և անուն ցանկալի. ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ հրեշտակս. եղեր օրինակ սրբութեան

թեան կուսանաց. վարդապետութիւն արանց արդարոց։ Զեզ նմանիլ կարօտին ամենայն հոգիք. միացեալք սըրբութ՟ե եւ սիրոյն Ք՟ի. զի մահուամբ ձերով մեզ ճանապարհ հորդեցիք. ելանել ամենայն մարդոյ առ Ա՟ծ։

Ղեկավարք ճարտարք հոգեւոր հըմտութեամբ. թեթեւաբեռն մարմնով եւ մտօք սըլացեալք. ընդ երկայն ասպարէզս ծովածուփ կենցաղոյս անվըրդովանաւեցիք եւ հասիք առ Ք՟ս։

Ճշմարիտ որթոյն քո շառաւիղք. եւ ողկոյզք ձըմլեալք երկնաւոր մըշակին. կոխեցայք ճըգնութ՟ե ի հընձանս ձեր զի ուրախ լինիցիք անմահական բաժակաւն։ Մերժեցին ըզկարիս մարմնական կենցաղոյս. զի ծանեան եթէ երազ է եւ սուտ պաճուճանք. ոչ հեշտացան ի գըրգանս փափկութեան. իմացան եթէ սնոտի է անցաւոր մեծութիւնս։ Յանդաստանս հոգեւորս աղօթից եւ պահոց վաստակեալք յուսով զամենայն ժամանակս. ժուժկալեալք փորձութեանց եւ պէսպէս լըլկանաց. եւ եղեալք ժառանգորդք անթառամ

պէ

պըսակին։ Նախանձելով յօրինեցին զառագաստ կուսութեան. նոր նորոգեալ արեամբ և հրով. մատնեցին զանձինս սուսերաց և ջահից. և անշէջ լապտերօք ըն հետևեալք մտին յառագաստն։

Շինուածք երկնաւորք ի յերկրի հաստատեալք. և արձանք լուսեղէնք ի յերկինս կանգնեալք ինքեանք եղեն և այլոց ցուցին. ըզ ճանապարհըն ցանկալի զվերինն երուսաղեմի։

Ո՛վ ըզգաստութեան իմաստուն կուսանացն որոց ոչ յաղթեաց հեշտութիւն և քուն. այլ արթունք և պատրաստք մնալով երկնաւոր հարսանեացըն. զի մտցեն ի յառագաստ անմահ փեսային։

Ունիրք ի նոսա ամեուն չարութեան և ոչ նախատինս յիմար կոչելոյ. քանզի միով պընդութեամբ հոգևոր արութեան. միաբան քաջացան առ հասարակ ցընծայեն։ Պարակցեալք քաջաղէն բըռնութեամբ ի յերկրէ ի յերկինս տարադէմ գընացին փախըստեայք. ինքեանք եղեն և մեզ ուսուցին. բազում նեղութբ մըտանել յայն հանգիստ։

Ջերմեռանդըն աղօթիւք և սիրովն առ

ած հոյյցեցին ընդ հրմաշըս փրկութեն · բաժանելով ընդ խաւար դիւապաշտ մոլորութեանց յաշխարհէ · պայծառացեալք լուսովն որ ի հօրէ ծագեցաւ ։

Աւահրս յոլովս առաքինութեան յայտնեցին որդւոց մարդկան վերանալ յաշխարհէ · անձնատուերիւր հոգեւորական վարուք · եղանել ի բանակս երկնաւորս անմարմին հրեշտակացն ։

Սոքա են քարինք սուրբք հիմնեցեալք Եսա. 54 12 ի յերկրի · զոր կանխաւ տեսեալ գուշակեաց մարգարէն · ի նոյն ի նիւթոյ շինեցաւ կաթուղիկէ եկեղեցի · բարձրացեալ փառօք ի պարծանս խաչին ։

Սառըն ձեր երանեալ նահատակք · զորս հրեշտակաց անմարմին զուարթնոցն · ի յերկնից ի յերկիր հեղան · եւ մարդիկք խառնեցան ի գունդս զինուորաց քրիստոսի աստուծոյ ։ Տօնեսցուք ըստուդութեամբ ի հրճուանս նոցունց · զի արբեալք լիցուք անմահական բաժակաւն · քանզի բաշխեն ըզբժշկութիւն հոգւոց եւ մարմնոց · եւ զպարգեւս երկնաւորս սիրողաց իւրեանց ։

Բարձրունոյն հրամանաւ աներեւոյթ ազդմամբ. յարեւմտից յարեւելս եկեալ հասին՝. զի լուսով հրեշտակական վարուք կուսութե. փարատեցին զխաւար դիւապաշտ մոլորութեանցն։

Ցնծութե տօնեսցուք ըզյիշատակս նոցունց. զի եւ նոցին հաղորդեսցուք փրկութեան. խնդրելով յարարչէն ըզպարգեւս երկնաւորս եւ զդասն ընդնոսին ի յարկսն լուսեղէն։

Հիւծեալք մաշեցան յուսացեալք ի մեծութիւն. եւ կանայք վեհագոյնք գերազանցեալք յաղթեցին՝ բուրվառք ոսկեղէնք հոտով հոգւոյն վառեցան. Ջահազգեստեալք ի քս եւ դասեալք ընդ հրեշտակս։ Փառաց ի փառս բարձրացեալ պարծին. ի պատիւ եւ ի փառս երեսուն եւ եօթեանցն. քանզի այս է թիւ երանեալ կուսանացն որք անթառամ պսակեցան յանվախճան յաւիտեան։

Քեզ որ ցնծութիւնդ ես քս ած. եւ ուրախութիւն ամենայն արդարոց. քաղցրացին վասն մեր աղաչանօք սրբոցն. շնորհելով զթողութիւն մեր բազում յանցանացն։

հբ Օրհնի զօրըն բանին ած որ վասըն մեր համբեր համբերեր մահու. բառնալով ըզդատակնիք անիծիցն առ իմէնջ գերապանծ մաքրութեամբ ըզմարդիկ վերագրեաց. խաչակից իւր և վըկայք կամաւոր մահուամբն իւրեանց։ Պիմամբ քո գոլով սըրբոյն Է̄ կուսպարիշտ պաշտամունան. երջանիկ ձանկատամբրոք յայտնեցան անպարտելիք. զի զԱ̃Ծ բոլորից տիրաբար սիրեցին՝. Էակցին հօր հետեւեալ ստացան ըզթագըն պարծանաց։

Ենթադրեալք զմահու խորխառուամն ընդդէմ մեղացըն վառեցան. Թոպեցան յերկունս գանից գերիվերոյ քան ըզբնութիւնս. ժուժկալեալք ի փորձ բանտից գելարանաց և կապանաց. ի մըրճմունըս գանգանաց սրոյ և հըրոյ մենամարտեալք։ Լըլկանօք և քերանօք զարեան վըտակըն հոսեցին՝. խորհըրդոյ ոչ խոտորումն և ոչ փոխադրութիւն բարուց. ծաղիկք նիւթեղէնք յաննիւթ ծաղիկըն յօդեցան՝. կատարեալք քաջութեամբ զչարին մուրհակըն կապտեցին։

Սրով հոգւոյն ըզինու վառեալք ըզհալածիչըն վանեցին՝. ձօնեցան զենմամբ որոյ ի բանաւոր ողջակիզումն · ղամբարամբ լուսոյ կենաց զխաւար մեղաց փարատեցին՝ · Ճոխաբար հետևեցան լուսաշաւիղ ընդ պողոտայն : Մերժեցին կործանեցին ըզմահահոտ ըզմեքենայսն · յաղթեցին կարեաց մարմնոյ և հեշտալի գործանաց · Նաւավարկեալք հողմավարբ ընդ ջրահեղեղ կռապաշտութիւնն · շնորհազարդ փայլմամբ փայլեալք ի յերկնային նաւահանգիստն :

Որոշեալք ի կրից կարեաց և ի քրիստոսարձանացեալք · չարաչար չարչարանօք զչարին մուրհակն կապտեցին՝ · պատրաստեալք չարանդութեանցն զհրեղէն գետոյն ըզկիզմանս · Ջրոյն կենաց գետոյ հետևեալք բղխեցին մեզ յարբուցումն ·

Նահ գործեալք ի լուսաձև յատուածակերտ ի խորանս · որբափայլ զգեստուք պճնեալք ըստ զարդու նոր սիոնի · վերանուեալ վերկայօրէն ըզմարգարիտն հաւատոյ · տենչացեալք անձկաւ լուսոյն վերասլացան ի կեանս անմահ :

Թագուհեացն հրաշալեաց գովեսցուք և մեք աշակերտեալք · ցօղեսցին մեր արտասուք ընդ ցօղ արեան նահատակացն ·

ւխւսեա

ւիւանեսցին թելք հոգւոյ ընդ հիւսից պսակելոյն․ փայլեսցին գործք բարեաց ընդ լուսաթուիչ մարտիրոսան։ Որ Քրիստոսի պսակողին զաղօթանուէր ընդ մաղթանս․ զերանեալ նահատակացն մատուսցուք ի յընծայումն․ զի հաճութեամբ խոնարհեալ ընկալցի վասն մեր․ թողութիւն շնորհեսցէ մեր բազում յանցանացն։

Այսօր զանյաղթելի սուրբքս Հռիփսիմեայ ընդ յիշատակին տօնէ սուրբ եկեղեցի․ բարեբանելով ընդ անմարմնական զինուորութեանն․ ըզՏէր Աստուած հարցն մերոց։ Հ

Այսօր հրաւիրեցան յերկնից արքայութիւնըն սուրբքն Հռիփսիմեանք․ և արիաբար ընդ դիմամարտեալ յաղթեցին բռնաւորին․ խոստովանելով ըզՔրիստոս Թագաւորն ըզ։ Այսօր պայծառացեալ ի կամարըս լուսեղէնըս սուրբքն Հռիփսիմէ․ և հիւսխականաց տօնողաց ուսոյց փառաւորել սուրբ զերրորդութիւնն․ ըզ։ Ըզտէր Ըզքրիստոս Թագաւորն Գ օրհնեցէք ըզնա նոր երգով օրհնութեամբ։ Որ պայծառազգեաց վայելչութեամբ չութ̄ե՝ պըսակեաց ըզսբ̄ըն հռիփսիմէ և զգայիանէ. օրհնեցէք ըզնա նոր երգով օրհնութ̄բ ։ Որոց վարդագոյն հեղմամբ սուրբ արեանցն . նորոգեաց զաշխարհս այսն ի ձեռըն սըրբոյն գրիգորի . օրհ ։

ո Ըս̄ա̄ըծ բայեր ըզգօւթըն հաւատոյ սըրբոյն հռիփսիմեայ . խոստովանիլ զա̄ծութիւն ըզ քո մարտիրոսութ̄բ ի մէջ հայաստանեայց ։ Յաղթող զօրութ̄բ պայծառացեալ ի կամացըս լուսեղէնս՝ ընդ անմարմնոց բազմութիւնս . խոստովանելով ըզքե̄զ թագաւորըն ։ Ժողովեալք հայցեմք . բարեխօսութ̄բ սըրբոց հռիփսիմեանցն . ընկալ և ըզ մեզ փըրկիչ յորդեգրութիւն ի դըրպրութե̄ կենաց ։

ա Պարկեշտ կանայքըն սըրբըն հռիփսիմեանք . Եղեն սիրողք քրիստոսի և ընկալան զանձառական ըզպըսակըն ։ Եղեն տաճար սըրբութեան որդւոյն աստուծոյ . շինեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից ։ Եռաւել քան ըզ լուսաւորս ի մէջ աստեղաց . փայլին ի դաշտըս հրեշտակաց դըրօշեալք վերինն երուսաղէմի ։

Յիշա

Յիշատակ քրիստոսասէր սրբոց վկայիցն· եկայք հաւատացեալք ըղ ճըգնութիւնըս նոցա հոգւոյն կենսացուք. և օրհնութեամբ զաստուածն փառաւորեսցուք։ մկ

Ուրախացիր Հռիփսիմէ քաջին սուրբ ընկերօք. զի ի տեղւոջ հեղման արեան ձերոյ դասք հրեշտակաց տօնեն ընդ մեզ եկայք։ Ի տաճարի Հռիփսիմեանց մեծ վկայուհեաց. եկեղեցիք սրբոց պայծառազարդեալ վայելչութեամբ տօնեն այսօր. եկայք հաւատացեալք։

Շարական Սրբուհւոյն Սանդխտոյ։

Բե պարծի այսօր սուրբ եկեղեցի. մկ
ով վըկայուհի սուրբ Սանդուխտ. դկ
որ ըղ հայրականըն քո թողեր զպաշտօն. վասն քրիստոսի հեղեր զարիւն քո սուրբ։ Աշակերտեցար առաքելոյն Թադէոսի. և ի հաւատըս ճըշմարիտս հաստատեցար. ոչ խոնարհեցելով ընդ հեթանոսական պաշտօնեան. արժանի եղեր վերանալ առ հայր։ Որ ըղ տիկնութեանըն քո թողեր ըղ փառս. և աստուածային փառօքըն զարդարեցար. այսօր դասակցեալ ընդ

ընդ զուարթունս երկնից. վասն մեր ու տեձ ա ր բարբէ խօսեաւ։

ակ

Կանոն Տապանակին Տեառն։ Օրհ։

Զզքեզ զքաղաք այ եւ տաճար անապական. ածազարդ եւ լուսազգեաց անվախճան փառօքն պսակեաց սուրբ Հոգին. եւ յաւէժ ուրախանան միշտ հաւատացեալք։

Ի քեզ ծագեալ ի համագոյին այ՝ արդարութեան արեգակն. որ լուսաւորեալ փարատեաց ի քէն ըզխաւարն անգիտութեան եւ հաստատեաց ըզհիմունս քո. ի վերայ հիմն առաքելոց եւ մարգարէից։

Ի քեզ կանգնեալ սեղան սրբութեան եւ բղխեալ աղբիւր անապական. որ յորդառատ վտակօք արբուցանէ յաւէտ ըզտիեզերս գեղեցկապէս բղխեալ ըզբողբոջս անուշից. եւ յաւէժ ուրախանան միշտ հաւ։

Ի վերայ վիմի հաստատոյ հիմանն առաքելոց եւ մարգարէից. շինեցեր ըզքո սուրբ զեկեղեցի. եւ ի սմա միաձայնեալ երգեն մարդիկք ընդ հրեշտակս. փառաւ

որե

որելով զսուրբ զերրորդութիւնդ:
Տեղի ապաւինի և ժողովարան բանաւոր հօտի· բնակարան հրեշտակաց նաւահանգիստ արդարոց և մեղաւորաց քաւարան· զարդարեալ առաքելովք և մարգարէիւք: Ո՛ անձն իմ և ծածկեալ խորհրդոցն յաւիտենից· իջեալ ի յերկնից մարմնացեալ ի կուսէն խաչեալ յերկրի և թաղեալ ի նոր ի գերեզմանի· և յարուցեալ յերրորդ աւուր· զի զմարգարէիցն ըզտառուսըն
կատարեսցէ:

Այսօր ցընծան դասք հրեշտակաց ի նաւակատիս քո սբ եկեղեցւոյ· բարեբանելով ըզտէր ած հարցըն մերոց: Այսօր տօնեն դասք սուրբ առաքելոյն ըզտօն՝ վերինն երուսաղեմի· յիմանալի տաճարին մատուցանեն զերգըս հոգևոր երգով· տէր իմ ըն: հ դձ

Այսօր երգսաւեալ գոչեն դասք հաւատացելոց· միաբանութբ արժանի արա ըզմեզ ի տաճարի քում սրբութեան փառաւորել զամենասուրբ զերրորդութիւնդ· ըն: Ըզտէր օրհնեցէք և առաւել բարձրարարէք ըզնա յաւիտեան: դ

Ար

Որ լուսաւորեաց զկաթուղիկէ մայր սբ եկեղեցի ածային լուսով. ամենայն ազինք գովեցէք և առաւել բարձրարարէք։ Որ բարձրացոյց զմանկունս սուրբ եկեղեցւոյ ի դասս վերին զօրացն. քահանայք օրհնեցէք և առաւել բ։

ո Լուսաւորեաց երուսաղէմ զի հասեալ է լոյս քո. զարդարեա զամուրս քո. և
Եսա 60. 1 փառք տեառն ի վերայ քո ծագեսցի։ Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ աստուած օրհնութիւն ՚ի սիոնէ. և քեզ մատուսցին աղօթք յերուսաղէմ։ Գովեա երուսաղէմ զտէր՝ և օրհնեա զաստուած քո. ընալ ի ժողովուրդ դըշխոյ դուստր սիոնի։

ա Այսօր աստուածութիւնն ըն զուարճանայ նոր հաստատելով զերկիր. պարք սուրբք փառաբանեն զըւարթնոց. և մեք ձայնիւ օրհնութեամբ զարդարեսցուք սուրբ ըղ տօնս։

Այսօր և մեք ցնծամք տօնիւս ընդհանուր հնչմամբ. մեծապէս փայլմամբ երևեցաւ յաշխարհի. ուր աստուած գոհութիւնք ընթանան պատմեն անդադար զբան կենդանի։

Խընդա՛ և զուարճացի՛ր եկեղեցի. կոյս մր՝ և հարսն երկնաւոր փեսային. ակնատեսանելեօք զօծեալն ըզ Քրիստոս. գոլով առ քեզ ըզժողովն հեթանոսաց։

ակ

մկ

Որ ի սկզբանէ իմաստութբ հաստատեցեր զեկեղեցի հօր իմաստութիւն. զոր նախանկար տեսութբ նըշանակեաց Մովսէս խորանաւն երկնահանգոյն ի Սինայ լեռին. լուսաւորելով փառօքն աստուծոյ։ Որ ըզխորհուրդ անապական տնօրէնութեանդ քո ի սրբոյ կուսէն. տըպաւորեալ տապանակն ածային ուխտի կտակարանաց բանիւդ աստուծոյ. փառաց անեղիդ տեղի հանգստեան։

Որ ի կեանս վերադարձի բնութեանըս Յես 3. 16
դարձմամբն Յորդանանու օրինակեցեր.
և ըզբռնութիւն մահու և դըժո
խոց կործանմամբն Երիքովի Յես 6. 20
տապանակաւ խաչին՝ հրա
շագործեալ նոր Իսրայ
ելի. օրհնութիւն
քեզ տէր երգես
ցեն ման
կունք։

✠



Պայծառացեալ դիմօք ՏՐ̃ն մեր յայտնի·
աշակերտաց իւրոց փառօք սոսկալի։
19 ժթ̃

Կանոն Վարդավառին Առաջնոյ աւուր:

ած Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք ի միանալի լոյս:

Որ ընձառագայթ փառաց քոց ցուցեր արեգակնակերպ փայլմամբ զարարածս լուսաւորեցեր զքեզ փառաւորեմք ի միանալի լոյս: Որ ահագին տեսլեամբ զարհուրեցուցեր զքո զաշակերտսն. ի թըմրութիւն հրաշիցն ի սէր աստուածային փառացքոց. զքեզ:

Երեւի երբեմն աշակերտացն հրաշալի տեսլեամբ. պայծառացեալ ի Թաբօր լերին: Եւ զերրեակ միութեան զանտանելի ըզ լոյսն. տեսանելով կենդանւոյն մահացան: Հանդիպեալ նախահարցն տեսութեամբ. հայցէին ի տեառնէ ասէին բարւոք է մեզ աստ լինել: Արասցուք երիս տաղաւարս տեառն և մովսէսի և եղիայի. և փառաւորեսցուք հանապազ զերրեակ միութիւնն: Մար 9: 4

ակ հ Օ անձառելի խորհուրդ սուրբ երրորդութեանդ. այսօր ի լերինն երեւե ցուցեր աշակերտաց քոց տէր. աստուած հարցըն մերոց ։ Սոսկալի հիացմամբ զայլակերպութիւն քո տէր. այսօր տեսեալ առաքելոցն յօրինէին քեզ տաղաւար. տէր ծ ։ Հովանացեալ ի վերայ լուսեղէն ամպոյն եւ ձայն ի յերկնից հայրական որ ասէ դա է որդի իմ սիրելի. տէր ծ

գ Ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս ։ Գովեցէք զարփիական ըզլոյսն երեւեալ ի Թաբօր լեռինն. եւ բարձր ։ Բարեբանեցէք զաստուածութեան երեւումըն աշակերտացն յայտնեալ. եւ բարձր ։

դ Զանճառելի ըզլոյս աստուածութեան տնօրինաբար կրեցեր ի քում յորովայնի մարիամ մայր եւ կոյս. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք ։ Իմանաւոր լուսոյն զարհուրեցան դասք առաքելոցն. այլ ի քեզ բովանդակ կրեցեր ըզհուր աստուածութեան ըն մարիամ. մայր եւ կոյս. օրհնու ։ Առաքելոցըն հովանացեալ ամպ լուսեղէն. գերագոյն քեզ հոգւոյն սրբոյ եւ զօրութիւն բարձրելոյն հովանաւորեալ սուրբ աստուածածին օրհ ։

Ի Թաբօր լերինն՝ ձեւացուցեր ըզքո դձ
բնութիւն աննմանելի գոյութեամբ. ո
ընդ որս և մեք ցընծութեամբ երգեմք
քեզ ողորմեաց մեզ մարդասէր։
Աշակերտըք հիացեալ բարբառէին
ըզխորհուրդս ի տագնաւլէն սրբոց իւ-
րեանց. ընդ որս։ Աքանչելի մեծ խոր-
հուրդ զերրորդութեանդ. քոյ սրբոյ
առաքելոցն ծանուցեր բարերար. ընդ։
Սոսկալի հիացմամբ զայլակերպութիւն
քո տր. առաքելոցն տեսեալ յօրինէին
քեզ տաղաւար. ընդ որ։ Հովանացեալ Դ
ամպ լուսեղէն և ըզհայրականըն լըւ-
եալ ըզձայն. եթէ դա է որդի իմ սի- 9·35
րելի. ընդ որս և։

Քրիստոս աստուած մեր շնորհեա ա
մեզ ընդ պետրոսի և ընդ որդւոցն զե-
բեդեայ. արժանաւորիլ քում ածային
տեսլեանդ։ Համբարձցես ըզմեզ տէր
առաւել քան ըզգալի զթաբօրական ըզ-
լեառնըն. յերկնաբերձ և յիմանալի
խորանսդ։ Ըստ որոյ և մեք ըզքաջ
տելին մեր. յարմարեսցուք քեզ հոգե-
որական տաղաւար որպէս միայնոյ մար-
դասիրի. և փրկչի։

Լոյս

ա Այսօր ըզ խորհուրդ քոյ կերկնաւոր զաւրութեանն. աշակերտաց քոց յայտնեցեր Քրիստոս ի Թաբօր լերինն:

Այսօր ըզ փրկական քո վասն աշխարհի ըզ մահ վըկայեալ. քեզ երևեցան Մովսէս և Եղիա: Սրբեա Տէր զմեղուցեալ քոյ ծառայիցս ըզ գայթակղանս. և շնորհեա տեսանել ըզ քեզ և լըսել ըզ հայրական ըզ ձայնն. եթէ դա է որդի իմ սիրելի:

գկ
մկ
Սաղ
97. 9

Երկինք ցընծասցեն առաջի քո Տէր. որ երևեցար ի փառս աստուծոյ հօր. միւսանգամ գուշակելով զգալուստն. վասն որոյ աստուածային լուսովն. զոր դարեալ ըզ քեզ հրաշալի ձայնիւ. ընդ երկնայինսն երկրածինքս ըզ քեզ բարեբանեմք ըզ Թաբօր լերինն:

Որ տեսեալ սոսկալի զանճառական լուսոյն ծաւալումն. յայլակերպիլն քո Քրիստոս որդի աստուծոյ. առաքելոց և մարգարէիցն պանծուցեալ ըզարհուրեցան. վասն: Որ զանճառելի խորհուրդ սուրբ երրորդութեանդ. սիմոնի վէմ ծանուցեր. Երրեակ կին տաղաւարացն յօրինմամբ. և սիրելոյ ի հօրէ վըկայ վըկայեալ ճըշմարիտ ըմիածին որդի· վասն որոյ աստուածային լոյս։

Դկ
Ձշ

Ուրախացի՛ր պըսակ կուսութեանց տիրամայր այսօր որդին քո· ըզհայրեթեանն իւրն փառաւորեաց զփառս նորա յամ ամ ւէժ· յանձըն արար ըզանձինըս մեր· Նըմա մօտես և հեթզիմաս սուրատեն յանուն նորա· ցընծան Թափօր եւ Հերմոն· Նըմա։ Սաղ 88 13

Եսայիաս ըզքեզ թեթեւ ամպ ետես· և ըզհոյր յամ մարմին ըզքո զորդին իւր զամ ւանեաց· Եսայ 19·1
Նըմա յամ ամ ւէժ։

Այսօր ի լերին նորին Թաբօր ցուցեր ըզնշարելոյց քոյց ի փառաւոր քոյց որդի աստուածոյ· օրհնեմք զքեզ ի փառաւորս հօրն· որ ես ատէր կենդանեաց և մեռելոց։ Հբ

Այսօր յայտնեցար առաքելոցն· ի խօսիլըն մովսէսի և եղիայի· վասն ելիցըն քոյ յերուսաղէմ· օրհնեմք։ Մատ 17·3

Այսօր և բարբառ ի վերուստ յաստուածոյ հօրէ· վասըն քոյ հընչեաց յառաքելոցն· ասէ դա է իմ որդի ըզմա լըւարուք· օրհնեմք։

բկ Աւանդատուն փառաց հօր որդւոյ միածնին. որ ընդ լուսոյ անմատոյց բնակեալ է մաքրութեամբ սրբութեան։ այսօր ի թաբօր փառօք փայլեցեր։

Որ անտես սրովբէից անհաս ի վեր քան զերքան. ծառայի կերպիւ պատածածկեալ ընդ լոյսդ անըստուերն. այսօր։

Որ հրեղինացն անմերձենալի հուր ածութեանդ. ի հողեղէնս խոնարհեալ լուսոյ արփիական. այսօր։

Որ գերագոյն փառօք պայծառացոյց զադամն առաջինն. որ ճաշակմամբ պտղոյն մերկացաւ ընդ փառս անպատմելիս. այսօր վերստին փառօք զարդարեաց։

Որ ի նախնումն երևեալ մովսէսի ամպովք ի սինեայ. այսօր լուսափայլ ամպովք ի թաբօր յայտնեալ վկայեաց. դա է իմ որդի դմա լուարուք։
Ղուկ 19 16

Որ ի յերկինս վերացոյց հրեղէն կառօք զհեղիայս. այսօր
4 Թագ 2. 11
վայրաբերեալ ի թաբօր հանդերձ մովսէսիւ. խօսէին զելիցն որ յերուսաղէմ։

գձ
հ
Այսօր ընդ խորհրդոյ անճառելի մեծութեանդ քոյ քրիստոս. ընդ ծածկեալն

իսկ

ի սկըզբանն յայտնեցեր աշակեր
տացն ի Թաբօր լերինն. օրհնեալ տր
Աըւած հարցըն մերոյ: Այսօր զաւա
քումըն մարգարէիցն ի քէն ծանուցեր
առաքելոցն. ըզմօսէս և զհեղիաս ած Գ
աբար կոչմամբ ի Թաբօր լերինն. օրհ 9. 30
նեալ: Այսօր անտեսըն յէութե հայր
ի բարձանց երևելով. ըզծընեալդ ի
սըրբոյ կուսէն դաւանեաց որդի իւր սի
րելի. օրհնեալ: Ըզտէր օրհնեցէք Դ
բարձր արարէք ըզնա յաւիտեանս:
Որ փայլեցար այսօր ի կուսածին մար
մնոյն. զգերբնական լոյս աստուած
ութեան. ըզտր: Որ յայտնեցար այսօր
ի Թաբօր լերինն. զմիութիւն սուրբ եր
րորդութեանն. ըզտէր օրհնեցէք
Որ զմիանգամ խորհուրդ գալըս
տեանն իւրոյ. տըպաւորեաց ծագմամբ
արփիական լուսոյն. ըզտր օրհ: Ռ
Որ զճառագայթս ածային ցուցեր այս
օր մարգարէիցն. որոյ ցանկային տե
սանել զանտեսըն սերոբէից. լոյսդ
անձառելի ողորմ ըմեա: Աա
Որ զդաւանութիւն պետրոսի ըզքեզ որ 1616
դի հօր աստուածոյ. հայր ի յամպոյն.

վըկայ

վըկայեալ այսօր որդի իւր դաւանիւր
լոյսդ անձ: Շնորհեա տէր և մեզ մե-
ղաւորացս ի միւսանգամ քոյ գալըս-
տեանն · տեսանել ըզքեզ հայրական
փառօք ի նորոգել ըզտիեզերս · լոյսդ:

ստ Յընծայ այսօր փառօք միածնին · լեառըն
Թաբօր հանդերձ հերմոնիւ ծւ · բարձրա-
ցեալ գերագոյն սինայ · և էջք աստու-
ծոյ դուռն երկնից ի նմա: Յընծան այս-
օր լերինք աստուծոյ · արարողին եղեալք
Է̄ աւա ծղ · պարակցին յաւիտենական
լերանցն · դասք առաքելոց և մար-
գարէից: Յընծայ այսօր լեառըն վերին
սիօն · հարսնարան անմահ արքայի ծն ·
տեսանելով զերկնաւոր փեսայն · զար-
դարեալ լուսով հայրական փառօք:

սա Օրհնեցէք մանկունք Է̄ երկնայնոցն
մկ ըզհայրն երկնաւոր որ մարմնացեալ բա-
բկ նին · վըկայեաց յերկնից այսօր ի Թաբօր
լերինն: Գովեցէք ընդ սերովբէս զոր-
դին միածին որ փայլեաց մարմնով ·
զլոյս ա̄ծութեն այսօր ի Թաբօր:
Բարեբանեցէք ընդ քերովբէս զհոգին
ճըշմարիտ որ լուսափայլ ամպօք · էակ-
ցին հովանացեալ այսօր ի:

Սա.

Կանոն Այլակերպութեան տաւնին (Օ)րհ:

Այսօր որէն ի յերկինս բան՝ ած և ծնունդ հօր միածին՝ · ընդ ծածկեալն ի յէից խորհուրդ յայտնեաց աշակերտացն · ծառայի ընդ կերպարանըն ծածկելով ածութիւն: Այսօր հնչեաց յառաքեալըն հայրական բարբառ յերկնից · ասէ դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ · որ ընդ բնութիւնն ածային կերպիւ ծածկեալ ծառայական: Այսօր վիմին հաստատոյ յայտնեալ զ խորհուրդ երրորդութեան՝ · Երրակի յօրինմամբ տաղաւարացըն խորհրդոյ · որում ըզ մեզ մաքրեսցես լինել տաճար երրորդութեանդ: Որ յանմարուեստ ի յաթոռ բազմեալ ընդ հօր և ընդ հոգւոյն · անըսկիզբն ած բանդ ի հօրէ առաքեցար · ծառայի զգեցար ըզ կերպարան ծածկելով զածութիւնդ: Այսօր ցուցեր ի Թաբոր զանտանելի լուսոյդ փայլումն · ծագեցեր աշխարհի արդարութեան արեգակն · յայտնելով աշակերտացն ըզ պայծառացեալ աստուածութիւնդ: Յորժամ ահիւ զարհուրեալ ընդարեալ դասուց առաքելոցն ·

Երրա

երրակի խորհրդով յօրինէին քեզ տաղաւար. որով ընդ մեզ սրբեսցես զնոյն տաճար քեզ հոգևոր:

դկ հ Այսօր զխորհրդոյն անճառ զծածկեալն յաւիտենից և յազգաց. յայտնեցեր փառօք ի Թաբօր լերինն. աստուած հարցն մերոց: Այսօր բղխեալն մարմնով յարմատոյն յեսսեայ գաւազան. ծաղկեցաւ լուսով ի Թաբօր լերինն. աստուած հարցն:

Այսօր անմահութեան հոտ անոյշ բուրեցաւ ի Թաբօր. Թըմբրեալ ընդարմացոյց զդասս առաքելոցն. աստուած հարցն:

գ Ի գոր՝ օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Օ լոյս փառացն հօր ծագեալ այսօր ի լերինն Թաբօր. ժողովուրդք բարձր:

Օ ամենասուրբ հոգին. որ ի նմանութեն լուսափայլ ամպոյն յայտնեցաւ ի Թաբօր. ժողովուրդք: Օ յաւիտենիցն հայր. որ երևեցաւն այսօր յերկնից վըկայեալ միածնին. քահանայք բարձր:

ո Որ յանսկիզբն յէէն անյեղապէս ծընեալ. և սրովբէականքն ծածկէին Թևօք. այսօր ընդ պարագրեալն մարմնով ցուցեր զաստուածութեան քո զփառս աշակերտաց քոց տէր. քրիստոս ամենաարարչծա ծագմամբդ. ողորմեա մեզ աստուած։

Որ զստուերական օրէնս մովսիսական տաւնիցն. ի սինէականըն խօսեցիր լերին. այսօր ընդ մովսէս և ընդ եղիաս ածեալ ի մեռելոց և կենդանեաց ի տեսիլ փառաց քոց. քրիստոս։ Որ զօրինակ մեծի գալստեան քո տէր. ի թաբօրականըն ծանուցեր լերին. քանզի տեսին դասք առաքելոցն ընդ նախահարսն եկեալ փառօք խօսէին զելիցն յերուսաղէմ զխորհուրդ. քրիստոս։

Այսօր ընդ հրեշտակս ի բարձունս ցընծասցուք տօնիւս. ի ծագել իմանալի լուսոյ աստուածութեանդ. օրհնեմք զքեզ էակիցըդ հօր. որ եկիր ի փրկել ըզ տիեզերս։ Այսօր յայտնեցեր ի թաբօր ընտրելոց դասուցն. առաքելոց և մարգարէից զաստուածային քո զփառս անճառելիս. օրհնեալ։ առ

Այսօր հայր յամպոյն վկայեալ էական բանին. միացեալ ընդ կուսածին մարմնոյդ. ասէ դա է իմ որդի ընդ որ հաճեցայ. օրհնեմք զքեզ է։

Այսօր ըզծագումն արդարոյն արեգական

նակերպ փայլմամբ. ծանուցեր ծածք
մամբ փառաց քոյ յարքայութեանդ.
օրհնեմք զքեզ եա։

մկ
սա

Երկինք ամենայն. այսօր ցնծան ը
ելանել քո տէր ի Թաբօր. յո
րում պարեն ընդ երկնայնոցն դասք
առաքելոց և մարգարէից. ընդ որս և
մեք օրհնեմք յառաջ քան զա
րև ըդ լոյսդ։

Որ յառաջ տեսանելով. մարգա
րէին զաստանօր ծագումն լուսոյ քոյ
տոր. գոչէր Թաբօր և հեր
մոն ի յանուն քո ցնծասցեն. ընդ։

Որ ցուցեր ի Թաբօր. զքեզ կենդա
նեաց և մեռելոց տէր և արարիչ. զմով
սէս և զեղիա ի տեսիլ փա
ռաց քոց կոչելով ընդ ընտրեալ քոց
առաքելոցն. ընդ որս և։

* * *



Կանոն Փոխմանն ։ Օրհնութիւն ։

Ուրախ լեր սբ եկեղեցի. քանզի քս արքայն երկնից այսօր պսակեաց ըզքեզ խաչելեան լուրով. եւ զարդարեաց զամենուրբ քո սքանչելի

դ.ձ

վայ

Ոա+ փառօքն իւրովք։ Խնդա յոյժ դուստր
Գ։ Գ. սիօնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո նորոգմամբ. Եւ թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակել ի քեզ։ Ընդ դասս երկնաւոր զօրացն. վերաբերեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառաւորութիւն. ուրախ լեր՝ հարսն անարատ անքննելի քո խորհրդով։

Խորհուրդ սրբութեան կանգնեցաւ նոր եկեղեցի. եւ քս թագաւորն ի սմա պատարագեալ. եւ կայք հաւատացեալք երգեսցուք քեզ երգ նոր։ Դասք հրեշտակացն վայր իջեալ յերկնից երգեն անելով. հրաշալի ձայնիւն եղանակելով. երգեն զերգս օրհնութեան՝ երրեակ սրբասաց ձայնիւ։ Ուրախ լեր բերկրեալ հարսնացեալ սբ եկեղեցի. պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութիւն. ծագեցին ըզշող լուսոյ ի քեզ մայր եկեղեցի։

զքձ Հ Ուրախ լեր այսօր սբ՝ եկեղեցի. եւ տօնեա ըզտօն քո դուստր սիօնի. քանզի ի քեզ հաճեցաւ բնակել որ ած հարցն մերոց։ Ուրախ լեր դըշխոյ դուստր սիօնի. եւ ցընծա վերինդ երուսաղէմ.

քանզ

քանզի Քս արքայն երկնից գայ առ քեզ.
Տր՝ Արծ։ Ուրախ լեր սիօն մայր եկեղե-
ցի. քանզի ի քեզ շող Ածեղէն ի հօրէ
լուսոյ ծագեալ. Տր։ ԶՏր՝ օրհնե- դ
ցէք բարձր արարէք ըզնա յաւիտեանս։
Որ պսակեալն այսօր սուրբ եկեղեցի.
նոր շնորհաւ խաչիւն իւրով. ըզՏր՝ օրհ։
Որ վերըստին ծնընդեամբ սուրբ աւա-
զանին. լուսաւորեալ զազգս որդւոց մարդ-
կան. երգով ըզՏր՝ օրհնեցէք բարձր։
Որ հաստատեցեր բանիւ զեկեղեցի քո ե
Քրիստոս ի վերայ առաքելական վի-
մի. երգել իմաստ զերգըս հոգեւորս։
Կանգնեալ ի սմա սեղան՝ սրբութեան
բաշխէ զմարմին իւր և զարիւն. և տայ
ի սմանէ մեզ նորոգութիւն. ի թողու-
թիւն մեղաց մերոց։
Իջեալ՝ հոգւոյն սրբոյ աղաւնակերպ
երեւման ձեւ. ի վերայ մարմնոյ և արեան
ըն տեառն. ի բժշկութիւն հոգւոց
մերոց։
Լուսաւորեա երուսաղէմ զարդարեա զա- զ
մուրըս քո. քանզի մերձեցաւ առ քեզ
փեսայն երկնաւոր. փրկութիւն քեզ
շնորհելով պըսակեալ անանցելի փառօքն
իւրովք. Այսօր

Այսօր ծագեաց քեզ դըշխոյ դուստր սիոնի · արդարութեան արեգակըն քո և սփռեցան ընդ քեզ՝ շընորհըք սուրբ հոգւոյն մեծապէս պարգևօք:

Այսօր ցընծայ սուրբ սիոն մայր եկեղեցի · փայլեցո զմանկունս քո որպէս զարեգակըն · զի անձամբ խընդութեամբ ըցոյց ընդ քեզ քրիստոս թագաւորն:

մկ
դկ

Իջ միածին ի հօրէ և լոյս փառաց ընդ նըմա · ձայնք հընչեցին սանդարամետք անդընդոց: Տեսեալ ընդ լոյս մեծ հայրապետին գրիգորի · պայծառ մեր ցընծութեամբ հաւատացեալ արքային: Եկայք ցընծասցուք սուրբ ընդ խորանին լուսոյ · քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի հայաստան աշխարհի:



Կանոն Վերափոխման Ածածնին։

Այսօր ժողովեալք սրբոցն ի մի տեղին· երանելի առաքեալքն և սբ կուսանքն. Զան հագգեսցուք սրբոյ ծա դՃ
ռայեալք լուցանէին ընդ լապտերս իւրեանց

րեանց · և միաձայնեալք ասէին · օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս ։

Այսօր դնելով ըզսուրբ կոյսն առ դրանըն գերեզմանին · սպասէին և ակնունէին տեառն իւր ինքնին գալըն · Տէր ի վերուստ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք · և նոցա միաձայն ։

Այսօր տեսեալ ըզսուրբ կոյսըն թռուցեալ յօդս · և ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս · մտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն · և նոցա ։ Այսօր ընդ բազմաչեայ քրովբէսն և ընդ վեցթևեան սրովբէսն · մտանելով յեօթնամատեղեան խորանսն · տեսանելով զանազան աթոռսըն զոր պատրաստեալ է քեզ տէրունունոյդ · երգեմք և մեք ասելով օրհ ։

Այսօր զազատիչըն յանցանաց նախամօրըն ըզ կուսութեան մայրըն · փոխադրեաց բանն աստուած յերկնայինսըն դասելով յածակերպ խորանսն և յանպատում ի կեանս · վասն որոյ հըրաձուծղական ձայնիւ քեզ երգէ եկեղեցիս սուրբ · ըզգընոր զօրհնաբանութիւն ։

Այսօր տիրամայր սըրբուհի կոյսն · աւ

ան ·

անդեաւ ընդ սրբրասնեաւ հոգւոյն ի ձեռըն հրեշտակական դասուցն. որպէս գերարփի փառաւորեալ ահեղիցըն նոյնմանեաւ հրեղինաց դասուցն. վասն որոյ յ:

Այսօր վերամբարձեալ ընդ մաքրականն մարմնոյն աստուածամօր կուսի. անմարմնոյն զզուարթնոցն ամփոփեալ ի տեղի գերակայիցն. յերկնէր ընդ գնդութեանցս անձաւեցն ամենեւն հայրորդս. վասն որոյ յ հրձուողական:

Այսօր յուսապատար խընդութեամբ եւ յաւէտ ժամբար հընչմամբ. նուագեմք քեզ հոգեղէն նուագս ընդ հրաբուն սերոբէիցն. տօնախմբել զվերափոխման կուսին ողջախոհոյ եւ մօր քոյ. վասն որոյ:

Հ:

Որ ըստ նախամօրըն զյանցանս երկանցն եբարձ. եւ զորդին քս միածին մարմնով ծընաւ. այսօր առ ի մէնջ ի վերին զօրսըն փոխեցեր զնախաստեղծին ծընողըն. զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ տէր ամենատուած հայր ըն ի մեղոց: Որ էակից ես հօր եւ սբ հոգւոյն. մարմնաւ ի յանձն առեալ ի սրբոյ կուսէն. այսօր փոխադրեալ զամենեցեր յերկնային խորանսն ընդ քոյին

ծը

ծընօղըն. զոր միշտ ունիմըք բարեխօս:

Ո՛ր ամենայնի ես լըցուցիչ բարենամ սուրբ հոգի. այսօր պարգևեաք հանգուցեր յանպատուամ ի կեանս ըղ կուսութեանց ըղ մայրըն. զոր միշտ ունիմ:

Գ Իղտր՝ օրհնեցէք Բարձր արարէք ըղ ծընօղ անտանելի բանին ըղ միշտ կուսին:

Ո՛ր ի կուսական դաստակցութեանց, և ի սըրբոյ ձըգնաւորաց փառաբանիս սըրբուհի. ուստի և մեք հաւատացեալքս վերապատուեմք. ըղ փոխումըն քո ՚ի յերկինս որ անուանել բարձրացելդ ես յաւիտեան: Օ բարեբանեալդ անդադար միշտ ի վերին զօրաց. և ըղ վերափոխեալդ ի դասս առաքելոց և մարգարէից. ընդ որս և մեք հաւատացեալքս վերապատուեմք. ըղ քոյին ածամօր ըղ հանգըստեան տօնս. որ անուանել բարձրացեալդ:

Դ Խորանայարկ կամարանըմանն յօրինեցար սուրբ կոյս աստուածածին. զանհասանելի զբանն աստըւած ընակուրապէս անսերմնաբար կրեցեր ի քում յորովայնի. անդադար երգով ըղ քեզ ըմիշտ մեծացուցանեմք:

Գաւան

Դուռն երկնից ըզծագումն անճառելի անապականն որ ի հօրէ առաքեցաւ. ի գիրկս քո բարձեալ կրեցեր ըզդիեցուցանելով մարմնացելոյդ ի քէն ըզկուսական քո տուր ըզկաթն. անդա։ Տեղափոխեալ ըզքեզ ի վերնական ի կառս քերովբէականս աստուածամայր. սպասաւորեալդ ի սերովբէից. և երկրպագեալդ յանմարմնական զօրաց. անդադար։

Որ ունիս իշխանութի մահու և կենաց. քրիստոս թագաւոր փառաց ողորմեա մեզ աստուած։ Տօնելով ըզ յիշատակ կուսին ած որդւոյ մօր. հրճուին հրեշտակք ի յերկինս և ցնծան դասք առաքելոց և մարգարէից ընդ կուսական տօնս ողորմեա. Ընդ միայնոյ մօր և կուսի մաղթեմք հայցելով ի քէն. բարեխօսեա անդադար առ որդիդ քո և աստուած մեր փրկել ըզմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։ ո

Անըսկզբն ած անհասանելի բնութի և հանգուցեալ ի հրեղէն կառս. վասն որոյ գովելով ասեմք. օրհնեալ ես հայր անըսկիզբն աստուած։ տ

Սար

Ամրդարատատեսն էր և ծիրանազգեցեալ հրաշափառագոյն կոյս. զոր առեալ որդւոյ վերափոխեալ դասուեաց յանպատումն է կեանս. վասն որոյ գովելով ասեմք. օրհնեալ ես որդի միածին տր ծ: Անհասանելի հոգւոյն զօրութեամբն՝ որով փարեալ համատարած լոյսն ընդ կուսական անձամբն. վերափոխելով յանպատմելի և յանհասանելի և յանանց լոյսն. վասն որոյ բարեբանելով ասեմք. օրհնեալ ես հոգիդ ճշմարիտ տր ծ:

Ճշ Անթառամ: Համեդա: Բարեխօսք:

դկ Կանոն Ննջման Աստուածածնի Օրհ:

